ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՆՍԾՏԻԿ-ԳՀԱՊՁԲ -17/22» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատող հանձնաժողովի նիստ

(Տեսագրման և վերարտադրման սարքավորում)

ք. Երևան 29 նոյեմբերի 2017թ. ժամը 15:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝	Հ. Արչունց
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Թ. Զաքարյան
	Շ. Հարությունյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	Ա. Իսկանդարյան
	Հ. Մելիքյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Պետրոսյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:
3. Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:
4. Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:
5. Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
6. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:
7. Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:
8. Գնման ընթացակարգի հրավերի տեքստի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին:
9. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

2. Գնանշման հարցման գնման ընթացակարգի հայտեր ներկայացրած մասնակիցների մասին:

1. Ընդունել ի գիտություն, որ

Սահմանված ժամկետում գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

N	Մասնակցի անվանումը	Հասցե	Էլ. փոստի հասցե
1	«ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 76/3	info@elcomp.am

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3.Հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին:

Հրավերի պահանջներին համապատասխան հայտեր (որոնց Armeps համակարգը դիտել է որպես ներկայացված (պիտանի) հայտեր), կազմել և ներկայացրել է հետևյալ մասնակիցը՝ «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4.Յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին:

Բավարար է գնահատվել «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ մասնակցի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխանող հայտը: Բավարար գնահատված հայտում առկա1 հրավերի պահանջներին համապատասխան ներկայացված գնային առաջարկը և հայտի ապահովումը:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5.Յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:

«ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ մասնակիցը կազմել և ներկայացրել է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան փաստաթղթեր:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6.Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գնի մասին:

1.Ընդունել ի գիտություն, որ.

Գնման առարկա է հանդիսանում ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամի կարիքների համար Տեսագրման և վերարտադրման սարքավորման ձեռքբերումը, որը խմբավորված է 1 չափաբաժնում:

Պայմանագիրը կատարելու համար հրավերով սահմանված պահանջներին համապատասխան գնահատված մասնակիցը ներկայացրել է հետևյալ գնային առաջարկը.

Հ/Հ	Գնման առարկայի անվանում	«ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ մասնակցի հայտով ներկայացված գները		
		ՀՀ դրամ		
		Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
1	Տեսագրման և վերարտադրման սարքավորում	129 000 /մեկ հարյուր քսանինը հազար/	25 800 /քսանհինգ հազար ութ հարյուր/	154 800/մեկ հարյուր հիսունչորս հազար ութ հարյուր/

Գնման ընթացակարգի մասնակցի հայտով ներկայացված գնային առաջարկում չկա թվերով և տառերով արտահայտված տվյալների միջև անհամապատասխանություններ:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

7.Առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների մասին:

1. Առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԷԼԿՈՄՊ» ՍՊԸ մասնակցին՝ որպես բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:
2. Էլեկտրոնային եղանակով ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության վերաբերյալ:
3. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության պահանջները՝ ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին սահմանված կարգով և ժամկետում գնահատող հանձնաժողովին ներկայացնել իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6 և հավելված N 6.1-ի:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

8. Գնման ընթացակարգի հրավերի տեքստի վերաբերյալ հարցումների և պարզաբանումների մասին:

Գնման ընթացակարգի վերաբերյալ նոյեմբերի 22-ին ստացվել է պարզաբանում: Սույն պարզաբանման հետ կապված կազմվել է հրավերի պարզաբանման մասին հայտարարություն, հաստատվել գնահատող հանձնաժողովի նոյեմբերի 23-ի N 2 նիստում և հրապարակվել է գնումների էլեկտրոնային համակարգում:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

9. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

Հաստատել գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման հետևյալ ժամանակացույցը.

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից եզրակացության և առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի ստացման հաջորդող օրը, ժամը 11:00-ին:

Քվեարկությամբ ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ _____ Հ. Արչունց

Գնահատող անդամներ (ԳԱ)՝ _____ Թ. Զաքարյան

_____ Շ. Հարությունյան

Բացող անդամներ (ԲԱ)՝ _____ Ա. Իսկանդարյան

_____ Հ. Մելիքյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա. Պետրոսյան